

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

►B

ԽՈՐՀՐԴԻ 1989 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՐԱՀԱՆԳ (89/662/ԵՏՀ)

Ներքին շուկայի ձեւավորման նպատակով ներհամայնքային առեւտրում անցկացվող անասնաբուժական ստուգումների վերաբերյալ

(ՊՏ L 395, 30.12.1989թ., էջ 13)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	ամսաթիվ
►M1	Խորհրդի 1990 թվականի դեկտեմբերի 10-ի L 373 90/675/ԵՏՀ հրահանգով	1		31.12.1990
▼M2	Խորհրդի 1991 թվականի հունվարի 28-ի L 46 91/67/ԵՏՀ հրահանգով	1		19.02.1991
▼M3	Խորհրդի 1991 թվականի հուլիսի 15-ի L 268 91/492/ԵՏՀ հրահանգով	1		24.09.1991
▼M4	Խորհրդի 1991 թվականի հուլիսի 22-ի L 268 91/493/ԵՏՀ հրահանգով	15		24.09.1991
▼M5	Խորհրդի 1991 թվականի հունիսի 26-ի L 268 91/494/ԵՏՀ հրահանգով	35		24.09.1991
▼M6	Խորհրդի 1990 թվականի նոյեմբերի 27-ի L 268	41		24.09.1991

91/495/ԵՏՀ հրահանգով

▶ <u>M7</u>	Խորհրդի 1991 թվականի հուլիսի 15-ի L 268	56	24.09.1991
	91/496/ԵՏՀ հրահանգով		
▼ <u>M8</u>	Խորհրդի 1992 թվականի հունիսի 16-ի L 268	1	14.09.1992
	92/46/ԵՏՀ հրահանգով		
▼ <u>M9</u>	Խորհրդի 1992 թվականի հունիսի 16-ի L 268	35	14.09.1992
	92/45/ԵՏՀ հրահանգով		
▶ <u>M1</u>	Խորհրդի 1992 թվականի հուլիսի 14-ի L 268	73	14.09.1992
	92/67/ԵՏՀ հրահանգով		
▶ <u>M1</u>	Խորհրդի 1992 թվականի դեկտեմբերի 17-ի L 62	49	15.03.1993
	92/118/ԵՏՀ հրահանգով		
▶ <u>M1</u>	Խորհրդի 2003 թվականի ապրիլի 14-ի թիվ L 122	1	16.05.2003
	806/2003 կանոնակարգով (ԵՀ)		
▶ <u>M1</u>	Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 L 157	33	30.04.2004
	թվականի ապրիլի 21-ի թիվ 2004/41/ԵՀ		
	հրահանգով		

Ուղղված՝

- ▶C1 Ուղղում՝ ՊՏ L 151, 15.06.1990թ., էջ 40 (1989/662)
- ▶C2 Ուղղում՝ ՊՏ L 195, 02.06.2004թ., էջ 12 (2004/41)



▼B

ԽՈՐՀՐԴԻ 1989 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՐԱՀԱՆԳ

**Ներքին շուկայի ձեւավորման նպատակով ներհամայնքային առետրում անցկացվող
անասնաբուժական ստուգումների վերաբերյալ**

(89/662/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 43-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը³,

քանի որ Համայնքը պետք է ներքին շուկայի աստիճանական կարգով ստեղծմանն ուղղված ակտեր ընդունի մինչեւ 1992 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում,

քանի որ անասնապահական արտադրանքի եւ կենդանական ծագման արտադրանքի առումով շուկայի միասնական կազմակերպման ներդաշնակեցված գործառույթներով նախատեսվում է անասնաբուժության ոլորտի խոչընդոտների վերացում նշված արտադրանքի առումով ներհամայնքային շուկայի զարգացման նպատակով, եւ քանի որ այս առումով գյուղատնտեսական արտադրանքի ազատ տեղաշարժը շուկաների միասնական կազմակերպման հիմնարար հատկանիշն է եւ պետք է նպաստի գյուղատնտեսական արտադրության համամասն զարգացմանն ու արտադրության գործոնների օպտիմալ օգտագործմանը,

քանի որ անասնաբուժության ոլորտում սահմանային գոտիներն օգտագործվում են ստուգումներ անցկացնելու նպատակով՝ ուղղված հանրության առողջության եւ կենդանիների առողջության ապահովմանը,

¹ ՊՏ թիվ C 225, 31.08.1988թ., էջ 4:

² ՊՏ թիվ C 326, 19. 12. 1988թ., էջ 28:

³ ՊՏ թիվ L 56, 06.03.1989թ., էջ. 7:

քանի որ վերջնական նպատակն ապահովելն է, որ անասնաբուժական ստուգումներն իրականացվեն միայն առաքման վայրում, եւ քանի որ այս նպատակին հասնելու համար նախատեսվում է հանրության առողջության ու կենդանիների առողջության ապահովման առումով հիմնական պահանջների ներդաշնակեցում,

քանի որ ներքին շուկայի ձեւավորման համար՝ նախքան սույն նպատակին հասնելը, շեշտը պետք է դրվի առաքման վայրում անցկացվող ստուգումների եւ այն ստուգումների կազմակերպման վրա, որոնք կարող են անցկացվել նշանակման վայրում, եւ քանի որ նման լուծումը կհանգեցնի Համայնքի ներքին սահմաններում անասնաբուժական ստուգումների կասեցմանը,

քանի որ սույն լուծմամբ ենթադրվում է ավելի մեծ վստահություն առաքման պետության կողմից անցկացվող անասնաբուժական ստուգումների նկատմամբ, եւ քանի որ վերջինս պետք է ապահովի, որ նման անասնաբուժական ստուգումները պատշաճորեն անցկացվեն ,

քանի որ նշանակման վայրի պետությունում անասնաբուժական ստուգումները կարող են անցկացվել նշանակման վայրում, եւ քանի որ, այնուամենայնիվ, խախտման լուրջ կանխավարկածի դեպքում, անասնաբուժական ստուգումը կարող է անցկացվել ապրանքների փոխադրման ընթացքում,

քանի որ անդամ պետությունների կողմից ներկայացվող ծրագրի մեջ պետք է նշվի, թե նրանք ինչ եղանակով են նախատեսում իրականացնել ստուգումները, եւ քանի որ այս ծրագրերը պետք է հաստատվեն Համայնքի կողմից,

քանի որ անհրաժեշտ է դրույթ սահմանել այն գործառույթների առումով, որոնք իրականացվում են այն դեպքում, երբ անասնաբուժական ստուգմամբ բացահայտվում է, որ բեռը բնականոն վիճակում չէ, եւ քանի որ նման դեպքում կարելի է առանձնացնել երեք հնարավոր լուծումներ՝ առաջինի նպատակը կլինի սխալ փաստաթղթերի շտկումն ապահովելը, երկրորդինը՝ վերացնել ցանկացած վտանգ, որն առաջանում է, երբ պարզվում է, որ տարածվել է կենդանիների վարակիչ հիվանդություն, ցանկացած նոր լուրջ եւ վարակիչ հիվանդություն կամ այլ պատճառ, որը հավանաբար, լուրջ վնաս կհասցնի կենդանիների եւ մարդկանց առողջությանը, իսկ երրորդը կձագի, երբ ապրանքները չեն բավարարում վերոնշյալ պատճառներից այլ պատճառներով սահմանված պահանջները ,

քանի որ անհրաժեշտ է դրույթ սահմանել այն հակասությունները հարթելու ընթացակարգի մասին, որոնք կարող են առաջանալ հաստատությունից, արտադրման կենտրոնից կամ ձեռնարկությունից ստացվող բեռների առումով,

քանի որ անհրաժեշտ է դրույթ սահմանել պաշտպանիչ միջոցների համար, քանի որ այս առումով, հատկապես ելնելով արդյունավետության նկատառումներից, պատասխանատվությունը նախեսառաջ դրվում է առաքման անդամ երկրի վրա, եւ քանի որ Հանձնաժողովը պետք է ընդունակ լինի արագորեն գործել, մասնավորապես՝ տեղում այցեր կատարելու եւ իրավիճակին համապատասխան ակտեր ընդունելու առումով,

քանի որ արդյունավետության նկատառումներից ելնելով՝ սույն Հրահանգում սահմանված կանոնները պետք է տարածվեն բոլոր այն ապրանքների վրա, որոնց նկատմամբ ներհամայնքային առետրի պարագայում կիրառվում են անասնաբուժական պահանջները,

քանի որ, այնուամենայնիվ, կենդանիների վարակիչ հիվանդությունների առումով անդամ պետությունում դեռ գերակայում են տարբեր առողջական վիճակներ, եւ քանի որ մինչեւ Համայնքի՝ այս հիվանդությունների դեմ պայքարելու մեթոդների մասին մոտեցման ձեւավորումը, ներհամայնքային մասշտաբով անասունների առետուրը ստուգելու հարցը պետք է առայժմ մի կողմ դրվի եւ փոխադրման ընթացքում պետք է թույլատրվի փաստաթղթային ստուգում, եւ քանի որ ներդաշնակեցման առկա իրավիճակի նկատառումներից ելնելով եւ մինչեւ Համայնքի կանոնների կիրառումը, այն ապրանքները, որոնք չեն կարգավորվում ներդաշնակեցված կանոններով, պետք է համապատասխանեն նշանակման վայրի պետության պահանջներին՝ պայմանով, որ դրանք համապատասխանում են Պայմանագրի 36-րդ հոդվածին,

քանի որ գործող հրահանգների դրույթները պետք է հարմարեցվեն սույն Հրահանգում սահմանված նոր կանոններին,

քանի որ այս կանոնները պետք է վերանայվեն՝ նախքան 1993 թվականի վերջը,

քանի որ Հանձնաժողովին պետք է վստահվի սույն Հրահանգի կիրառման համար անհրաժեշտ ակտերի ընդունումը, եւ քանի որ այդ նպատակով անհրաժեշտ է դրույթ նախատեսել՝ Անասնաբուժության հարցերով մշտական կոմիտեի շրջանակներում Հանձնաժողովի եւ անդամ պետությունների միջեւ սերտ ու արդյունավետ համագործակցության ապահովման ընթացակարգերի առումով,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ:

Հոդված 1

Անդամ պետություններն ապահովում են, որ անասնաբուժական ստուգումների ենթարկվի Ա հավելվածում նշված ակտերով կամ 14-րդ հոդվածով նախատեսված կենդանական ծագման արտադրանքը, իսկ այն արտադրանքի ստուգումները, որը նախատեսված է առետրի համար, չհակասելով 6-րդ հոդվածին, այլևս չանցկացվեն սահմանների վրա, այլ անցկացվեն սույն Հրահանգի համաձայն:

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակներով՝

1. «Անասնաբուժական ստուգում» նշանակում է ցանկացած ֆիզիկական ստուգում եւ (կամ) վարչական ձեւականություն, որը կիրառվում է 1-ին հոդվածում նշված արտադրանքի նկատմամբ, եւ որը նախատեսված է ուղղակիորեն կամ այլ եղանակով հանրության կամ կենդանիների առողջության պաշտպանության համար.
2. «Առետուր» նշանակում է անդամ պետությունների միջեւ ապրանքների առետուր՝ Պայմանագրի 9 (2) հոդվածի իմաստով.
3. «Հաստատություն» նշանակում է ցանկացած ձեռնարկություն, որը արտադրում, պահեստավորում կամ մշակում է 1-ին հոդվածում նշված արտադրանքը.
4. «Իրավասու մարմին» նշանակում է անդամ պետության այն կենտրոնական մարմինը, որն իրավասու է իրականացնելու անասնաբուժական հսկողություն կամ ցանկացած մարմին, որին պատվիրակված է նման իրավասություն.
5. «Անասնաբուժական պետական տեսուչ» նշանակում է անասնաբույժ, որը նշանակվել է անդամ պետության կենտրոնական իրավասու մարմնի կողմից:

ԳԼՈՒԽ I

Ծագման առումով ստուգումներ

Հոդված 3

1. Անդամ պետություններն ապահովում են, որ առետրի համար նախատեսված լինի միայն 1-ին հոդվածում նշված այն արտադրանքը, որը ձեռք է բերվել, ստուգվել, մակնշվել եւ

պիտակավորվել է համապատասխան նշանակետի համար նախատեսված Համայնքի կանոնների համաձայն եւ որոնց, դրանցում նշված վերջնական բեռն ստացողին փոխադրելիս, կցված լինի բուսասանիտարական հավաստագիր, կենդանիների առողջության մասին հավաստագիր կամ Համայնքի անասնաբուժական կանոններով նախատեսված ցանկացած այլ փաստաթուղթ:

Ծագման հարցերով հաստատությունները շարունակական վերահսկողությամբ ապահովում են, որ նման արտադրանքը բավարարի առաջին ենթապարբերության պահանջները:

Չհակասելով Համայնքի օրենսդրությամբ անասնաբուժական պետական տեսուչի համար սահմանված դիտանցման պարտականություններին՝ իրավասու մարմինը անցկացնում է հաստատությունների կանոնավոր ստուգումներ՝ համոզվելու համար, որ առետրի համար նախատեսված արտադրանքը համապատասխանում է Համայնքի պահանջներին, կամ սույն հոդվածի 3-րդ ենթապարբերությունում եւ 14-րդ հոդվածում նշված դեպքերում՝ նշանակման վայրի անդամ պետության պահանջներին:

Եթե հիմք կա կասկածելու, որ պահանջները չեն բավարարվում, ապա իրավասու մարմինն անցկացնում է անհրաժեշտ ստուգումներ եւ, եթե կասկածը հաստատվում է, ձեռնարկում է համապատասխան միջոցներ, որոնք կարող են ներառել նաեւ հաստատման չեղյալ համարելը:

2. Եթե տրանսպորտային փոխադրումները ներառում են նշանակման մի քանի վայրեր, ապա արտադրանքը պետք է խմբավորվի խմբաքանակներով՝ ըստ նշանակման վայրերի քանակի: Յուրաքանչյուր խմբաքանակի կցվում է վերոնշյալ հավաստագիրը կամ փաստաթուղթը:

Եթե 1-ին հոդվածում նշված արտադրանքը նախատեսված է երրորդ երկիր արտահանելու համար, ապա տրանսպորտային փոխադրումները պետք է մնան մաքսային վերահսկողության ներքո մինչեւ դրանց՝ Համայնքի տարածքից դուրս գալը:

3. Այն անդամ պետությունները, որոնք երրորդ երկրներից կամ ընտիր ներմուծումներ են կատարում, տեղեկացնում են Հանձնաժողովին եւ այլ անդամ պետությունների նման ներմուծումների իրականացման մասին:

Եթե արտադրանքը ներմուծվում է Համայնքի տարածք վերոնշյալ անդամ պետություններից բացի այլ անդամ պետության կողմից, ապա տվյալ անդամ պետությունն անցկացնում է ապրանքների ծագման եւ նշանակետի ստուգումներ՝ համաձայն 6 (1) հոդվածի :

Նշանակման վայրի անդամ պետություններն արգելում են, որ համապատասխան արտադրանքն ուղարկվի իրենց տարածքից, բացառությամբ, եթե դրանք պարտավորված չեն նույն հնարավորությունից օգտվող մեկ այլ երրորդ երկրի առջև:

Հոդված 4

1. Առաքման անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ օպերատորները պահպանում են անասնաբուժական պահանջները 1-ին հոդվածում նշված արտադրանքի արտադրման, պահեստավորման, շուկայահանման եւ փոխադրման բոլոր փուլերում: Մասնավորապես, նրանք ապահովում են, որ՝

– այն կենդանական ծագման արտադրանքը, որի վրա տարածվում է Ա հավելվածում նշված ակտերը, ստուգվեն միեւնույն եղանակով, անասնաբուժական տեսանկյունից՝ անկախ նրանից, թե դրանք նախատեսված են ներհամայնքային առետրի, թե ազգային շուկայի համար,

– այն արտադրանքը, որի վրա տարածվում է Բ հավելվածը, չտեղափոխվի այլ անդամ պետության տարածք, եթե այն չի կարող շուկայահանվել իրենց սեփական տարածքում Պայմանագրի 36-րդ հոդվածում պարզաբանված պատճառներով:

2. Առաքման անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան վարչական, իրավական կամ քրեական միջոցներ՝ պատժելու համար ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից անասնաբուժական օրենսդրության ցանկացած խախտում այն դեպքում, երբ պարզ է դառնում, որ Համայնքի կանոնները խախտվել են, մասնավորապես, երբ պարզ է դառնում, որ կազմված հավաստագրերը կամ փաստաթղթերը չեն համապատասխանում արտադրանքի իրական վիճակին կամ որ հանրության առողջության մասին պիտակներ են փակցվել այնպիսի արտադրանքի վրա, որը չի համապատասխանում այդ կանոններին:

ԳԼՈՒԽ II

Նշանակետ ժամանելիս կատարվող ստուգումները

Հոդված 5

1. Նշանակման վայրի անդամ պետություններն իրականացնում են հետեւյալ միջոցառումները՝

ա) իրավասու մարմինը կարող է ապրանքների նշանակետային վայրերում տեղում ոչ խտրական անասնաբուժական ստուգումների միջոցով ստուգել, թե արդյոք 3-րդ հոդվածի պահանջները բավարարվել են. միեւնույն ժամանակ այն նաեւ կարող է նմուշներ վերցնել:

Ավելին՝ այն դեպքում, երբ փոխադրման անդամ պետության կամ նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինը այնպիսի տեղեկություն ունի, որը խախտման կասկած է առաջացնում, ապա ստուգումներ կարող են անցկացվել նաեւ դրա տարածքում բեռների փոխադրման ընթացքում՝ ներառյալ տրանսպորտային միջոցների համապատասխանության ստուգումները,

բ) եթե մեկ այլ անդամ պետությունում արտադրված 1-ին հոդվածում նշված արտադրանքը նախատեսված է՝

–անասնաբուժական պետական տեսուչի պատասխանատվության տակ գտնվող հաստատության համար, ապա վերջինս պետք է ապահովի, որ տվյալ հաստատությունում ընդունվի միայն այն արտադրանքը, որը բավարարում է 3 (1) հոդվածի՝ փաստաթղթերի պատրաստման եւ կցման առումով պահանջները, կամ Բ հավելվածում նշված արտադրանքի դեպքում՝ այն արտադրանքը, որին կցված է նշանակման վայրի երկրի կանոններով սահմանված փաստաթուղթ,

–խմբաքանակները բաշխող հաստատված միջնորդի կամ շատ ճյուղեր ունեցող առեւտրային կազմակերպությունների համար, կամ մշտական վերահսկողության չենթարկվող ցանկացած հաստատության համար, ապա վերջինս, նախքան խմբաքանակի բաշխումն ու շուկայահանումը, կարող է ստուգել, որ նշված նշանները, հավաստագրերը, կամ առաջին պարբերությամբ նշված փաստաթղթերն առկա են եւ տեղեկացնել իրավասու մարմինն ցանկացած խախտման կամ շեղման դեպքի մասին,

–մյուս բեռն ստացողների համար, մասնավորապես, երբ խմբաքանակը մասնակիորեն բեռնաթափվում է փոխադրման ընթացքում, խմբաքանակին պետք է, 3 (1) հոդվածի համաձայն, կցված լինի առաջին պարբերությամբ նշված հավաստագրի բնօրինակը:

Այն երաշխիքները, որոնք պետք է տրվեն երկրորդ եւ երրորդ պարբերությամբ նշված բեռն ստացողների կողմից, հստակեցվում են 3-րդ պարբերությամբ նախատեսված նախնական գրանցման ժամանակ իրավասու մարմնի հետ ստորագրվող համաձայնագրում: Իրավասու մարմինն անցկացնում է պատահական ստուգումներ՝ տվյալ երաշխիքների հետ համապատասխանությունն ստուգելու համար:

2. Չհակասելով 4-րդ հոդվածին՝ այն դեպքում, երբ Համայնքի կանոններով սահմանված՝ Համայնքի չափանիշները չեն կիրառվում եւ, 14-րդ հոդվածով նախատեսված դեպքում, նշանակման վայրի անդամ պետությունը, պատշաճորեն հաշվի առնելով Պայմանագրի ընդհանուր դրույթները, կարող է պահանջել, որ ծագման հաստատությունը կիրառի գործող չափանիշները անդամ պետության ներպետական նորմերի համաձայն: Ծագման անդամ պետությունն ապահովում է տվյալ արտադրանքի համապատասխանումը նշված պահանջներին:

3. Այն օպերատորները, որոնք ունեն այլ անդամ պետությունից իրենց առաքված արտադրանք կամ որոնք ամբողջությամբ բաժանել են նման արտադրանքի խմբաքանակը՝

- ա) իրավասու մարմնի պահանջով ենթակա են նախնական գրանցման,
- բ) վարում են գրանցամատյան, որի մեջ գրանցում են նման առաքումները,
- գ) իրավասու մարմնի պահանջով պետք է զեկուցեն այլ անդամ պետությունից եկող արտադրանքի ժամանման մասին այնքանով, որքանով դա անհրաժեշտ է՝ 1-ին պարբերության մեջ նշված ստուգումներն անցկացնելու համար,
- դ) իրավասու մարմնի կողմից սահմանված՝ վեց ամսից ոչ պակաս ժամկետով պահպանում են առողջապահական հավաստագրերը կամ 3-րդ հոդվածում նշված փաստաթղթերը իրավասու մարմնի պահանջով՝ դրանք վերջինիս ներկայացնելու նպատակով:

4. Սույն հոդվածը կիրարկելու համար մանրամասն կանոններն ընդունվում են 18-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

5. Խորհուրդը, գործելով Հանձնաժողովի զեկույցի հիման վրա, որին կցված է փոփոխությունների ցանկացած առաջարկ, կրկին ուսումնասիրում է սույն հոդվածը սույն Հրահանգի կիրարկումից հետո երեք տարվա ընթացքում:

Հոդված 6

▼M1

1. Անդամ պետություններն ապահովում են, որ այն վայրերում իրականացվող ստուգումների ժամանակ, որտեղից I հավելվածում նշված՝ երրորդ երկրից բերվող արտադրանքը կարող է

տեղափոխվել 90/675/ԵՏՀ⁴ հրահանգի I հավելվածում սահմանված տարածքներ, ինչպես օրինակ՝ երրորդ երկրի նավահանգիստներ, օդանավակայաններ եւ սահմանային հսկողության անցակետեր, ձեռնարկվեն հետեւյալ միջոցները՝

- ա) արտադրանքի ծագման առումով փաստաթղթային ստուգում,
- բ) համայնքային ծագում ունեցող արտադրանքի վրա տարածվեն 5-րդ հոդվածով նախատեսված ստուգումների մասին կանոնները,
- գ) երրորդ երկրներից ստացված արտադրանքի վրա տարածվեն 90/675/ԵՏՀ հրահանգում սահմանված կանոնները:

▼B

2. Այնուամենայնիվ, սկսած 1992 թվականի հուլիսի 1-ից եւ շեղում կատարելով 1-ին պարբերությունից՝ Համայնքի երկու աշխարհագրական վայրերի միջեւ կանոնավոր եւ ուղիղ կապ ապահովող տրանսպորտային միջոցներով տեղափոխվող ամբողջ արտադրանքի վրա տարածվում են 5-րդ հոդվածում սահմանված վերահսկման կանոնները:

Հոդված 7

1. Եթե բեռի նշանակման վայրում կամ փոխադրման ընթացքում անցկացվող ստուգման ժամանակ անդամ պետության իրավասու մարմինները հաստատում են՝

- ա) վերջին անգամ Հանձնաժողովի 89/162/ԵՏՀ⁵ որոշմամբ փոփոխված 82/894/ԵՏՀ հրահանգում⁶ նշված հիվանդության համար պատասխանատու հարուցիչների, զոոնոս վարակիչ հիվանդության կամ այլ հիվանդության, կամ կենդանիների կամ մարդկանց համար հավանաբար լուրջ վտանգ հանդիսացող այլ պատճառի առկայությունը, կամ այն, որ արտադրանքը բերվում է մի տարածքից, որը վարակված է էպիզոոտիկ հիվանդությամբ, նրանք, բացառությամբ կենդանիների առողջությանն առնչվող դեպքերի, այն արտադրանքի պարագայում, որը ենթարկվել է 88/660/ԵՏՀ⁷ հրահանգով վերջին անգամ փոփոխված

⁴ ՊՏ թիվ L 373, 31.12.1990թ., էջ. 1:

⁵ ՊՏ թիվ L 61, 04.03.1989թ., էջ. 48:

⁶ ՊՏ թիվ L 378, 31.12.1987թ., էջ. 58:

⁷ ՊՏ թիվ L 382, 31.12.1988թ., էջ. 35:

80/215/ԵՏ⁸ հրահանգի 4-րդ հոդվածում նշված մշակման ձեւերից որեւէ մեկին, պատվիրում են ոչնչացնել խմբաքանակը կամ այն օգտագործել այլ կերպ, որը սահմանված է Համայնքի կանոններով:

Խմբաքանակի ոչնչացմանն առնչվող ծախսերը հոգում է բեռնառաքողը կամ նրա ներկայացուցիչը:

Նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինները անմիջապես հեռագրի միջոցով մյուս անդամ պետությունների իրավասու մարմիններին եւ Հանձնաժողովին տեղեկացնում են հայտնաբերված հիվանդության, ընդունված որոշման եւ նման որոշումներ կայացնելու պատճառների մասին:

Կարող են կիրառվել 9-րդ հոդվածով նախատեսված պաշտպանիչ միջոցները:

Բացի դրանից՝ անդամ պետության խնդրանքով եւ, համաձայն 17-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի, Հանձնաժողովը կարող է Համայնքի օրենսդրությամբ չնախատեսված իրավիճակները հարթելու նպատակով, ընդունել ցանկացած ակտ, որն անհրաժեշտ է՝ անդամ պետությունների կողմից համաձայնեցված մոտեցման ցուցաբերմանը հասնելու համար:

բ) որ ապրանքները չեն համապատասխանում Համայնքի հրահանգներում սահմանված պայմաններին, կամ, հրահանգներով նախատեսված Համայնքի չափանիշների մասին որոշումների բացակայության դեպքում, ազգային չափանիշների համաձայն, նրանք կարող են բեռնառաքողին կամ նրա ներկայացուցչին տրամադրել հետեւյալ տարբերակներից ընտրություն կատարելու իրավունք՝ պայմանով եթե դա չի հակասում առողջության եւ կենդանիների առողջության նկատառումներին՝

- վերացնել ապրանքները, կամ

-օգտագործել ապրանքները այլ նպատակներով, այդ թվում՝ վերադարձնել դրանք՝ ծագման հաստատության երկրի իրավասու մարմնի թույլտվությամբ:

Այնուամենայնիվ, եթե պարզ է դառնում, որ հավաստագիրը կամ փաստաթղթերը պարունակում են խախտումներ, բեռնառաքողին՝ նախքան դատարանին դիմելը, տրամադրվում է արտոնյալ ժամկետ՝ որպես այս խնդիրը լուծելու վերջին հնարավորություն:

⁸ ՊՏ թիվ L 47, 21.02.1980թ., էջ. 4:

2. Համաձայն 18-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի՝ Հանձնաժողովը կազմում է 1-ին պարբերության մեջ նշված հարուցիչների ու հիվանդությունների, եւ սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնների ցանկ:

Հոդված 8

1. 7-րդ հոդվածում նախատեսված դեպքերում, նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինն անմիջապես կապվում է առաքման անդամ պետության իրավասու մարմինների հետ: Այս մարմինները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները եւ տեղեկացնում առաջին անդամ պետությանը անցկացվող ստուգումների բնույթի, ընդունված որոշումների եւ նման որոշումներ կայացնելու պատճառների մասին:

Եթե առաջին անդամ պետության մարմինը կարծում է, որ նման միջոցների ձեռնարկումը պատշաճ չէ, երկու անդամ պետությունների իրավասու մարմինները միասին փնտրում են իրավիճակը շտկելու ուղիներ եւ միջոցներ. համապատասխան դեպքում սա կարող է ներառել տեղում անցկացվող ստուգում:

Այն դեպքում, երբ 7-րդ հոդվածով նախատեսված ստուգումները ցույց են տալիս կրկնվող խախտումներ, ապա նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմինը դրա մասին տեղեկացնում է Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետությունների անասնաբուժական տեսչություններին:

Նշանակման վայրի անդամ պետության իրավասու մարմնի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ եւ հաշվի առնելով հաստատված խախտումների բնույթը՝ Հանձնաժողովը կարող է՝

- ուղարկել ստուգում իրականացնող հանձնախումբ տվյալ հաստատություն կամ
- հանձնարարել այն անասնաբուժական պետական տեսուչին, որի անունը նշված է անդամ պետությունների առաջարկով՝ Հանձնաժողովի կողմից կազմված ցուցակում, եւ ում ընդունում են համապատասխան տարբեր կողմերը՝ ստուգելու տվյալ հաստատության փաստերը,
- պահանջել իրավասու մարմնից խստացնել վերջինիս կողմից համապատասխան հաստատության արտադրանքի նմուշառումը,

Այն տեղեկացնում է անդամ պետություններին հայտնաբերած դեպքերի մասին:

Այն դեպքում, երբ այս միջոցները ձեռնարկվում են հաստատության կողմից կրկնվող խախտումների առնչությամբ լուծում տալու նպատակով, Հանձնաժողովը վերոնշյալ ենթապարբերության պարբերությունների կիրառման հետեւանքով առաջացած ցանկացած վճար գանձում է նշված հաստատությունից:

Հիմք ընդունելով Հանձնաժողովի հայտնաբերած դեպքերը՝ առաքման անդամ պետությունը նշանակման վայրի անդամ պետության պահանջով խստացնում է համապատասխան հաստատությունից ստացվող արտադրանքի ստուգումները, եւ կենդանիների առողջության կամ հանրության առողջության համար լուրջ վտանգի հիմքեր բացահայտելու դեպքում՝ կասեցնում հաստատումը:

Նշանակման վայրի անդամ պետությունն իր հերթին կարող է խստացնել նույն հաստատությունից ստացվող արտադրանքի ստուգումները:

Նշված երկու անդամ պետություններից մեկի խնդրանքով, այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությամբ խախտումները հաստատվել են, Հանձնաժողովը պետք է, 17-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն, ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ ընդհուպ մինչեւ անդամ պետություններին ժամանակավորապես արգելելու այդ հաստատությունից իրենց տարածք արտադրանքի ներմուծումը թույլատրելը: Այս միջոցները պետք է հնարավորինս շուտ հաստատվեն կամ վերանայվեն 17-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

Սույն հոդվածի կիրառման համար ընդհանուր կանոններն ընդունվում են 18-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

2. Անդամ պետություններում գործող օրենքների համաձայն՝ իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումների դեմ առկա բողոքարկման իրավունքները չեն փոփոխվում սույն Հրահանգով՝ բացառությամբ չորրորդ ենթապարբերությամբ նախատեսված դեպքի:

Բեռնառաքողին կամ նրա ներկայացուցչին եւ առաքման անդամ պետության իրավասու մարմին տեղեկացնում են նշանակման վայրի պետության իրավասու մարմնի կողմից ընդունված որոշումների ու նման որոշումներ ընդունելու պատճառների մասին:

Բեռնառաքողի կամ նրա ներկայացուցչի կողմից պահանջը ներկայացնելու դեպքում, վերոնշյալ որոշումները եւ դրանց ընդունման պատճառները նրան գրավոր են փոխանցվում՝ նշելով մանրամասներ բողոքարկելու իրավունքների ու դրանց համար կիրառելի

ընթացակարգերի եւ ժամանակային սահմանափակումների մասին, որոնցից նա կարող է օգտվել անդամ պետությունում գործող իրավունքի համաձայն:

Այնուամենայնիվ, վեճի առաջացման դեպքում, երկու համապատասխան կողմերը կարող են, համաձայնության գալով միմյանց հետ, առավելագույնը մեկ ամսվա ընթացքում ներկայացնեն վեճի առարկան այն փորձագետի գնահատմանը, որի անունը նշված է Համայնքի՝ Հանձնաժողովի կողմից կազմված փորձագետների ցուցակում. փորձագետի խորհրդատվությանը դիմելու ծախսը հոգում է Համայնքը:

Նման փորձագետները տալիս են իրենց եզրակացություններն ամենաուշը 72 ժամվա ընթացքում: Կողմերը պետք է կատարեն փորձագետի եզրակացության պահանջները՝ պատշաճորեն հաշվի առնելով Համայնքի անասնաբուժությանն առնչվող օրենսդրությունը:

3. Բեռի վերադարձման, ապրանքների պահեստավորման, այլ նպատակներով օգտագործման կամ դրանց ոչնչացման ծախսերը հոգում է բեռն ստացողը:

ԳԼՈՒԽ III

Ընդհանուր դրույթներ

Հոդված 9

1. Յուրաքանչյուր անդամ պետություն անմիջապես տեղեկացնում է մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին իր տարածքում 82/894/ԵՏՀ հրահանգում նշված հիվանդությունների տարածումից բացի այլ ցանկացած զոոնոզ վարակիչ հիվանդությունների, այլ հիվանդությունների տարածման, կամ ցանկացած այլ պատճառի մասին, որը կարող է լուրջ վտանգ լինել կենդանիների կամ մարդկանց համար:

Ծագման անդամ պետությունն անմիջապես վերահսկում է կամ ձեռնարկում Համայնքի կանոններով նախատեսված նախազգուշական միջոցներ, մասնավորապես՝ այդ կանոններով նախատեսված պաշտպանական գոտիներ որոշելը, կամ ընդունում է վերջինիս կողմից պատշաճ համարվող ցանկացած այլ ակտ:

Նշանակման կամ փոխադրման վայրի այն անդամ պետությունը, որը 5-րդ հոդվածում նշված ստուգման ընթացքում հաստատում է առաջին ենթապարբերությունում նշված հիվանդություններից կամ պատճառներից որեւիցե մեկի առկայությունը, կարող է

անհրաժեշտության դեպքում ձեռնարկել Համայնքի կանոններով նախատեսված նախազգուշական միջոցները:

Մինչև 4-րդ պարբերության համաձայն միջոցներ ձեռնարկելը՝ նշանակման վայրի անդամ պետությունը կարող է հանրության կամ կենդանիների առողջությանն առնչվող լուրջ հիմքերով ձեռնարկել միջանկյալ պաշտպանիչ միջոցներ՝ համապատասխան հաստատությունների առումով, կամ, կենդանահամաճարակային հիվանդության դեպքում՝ Համայնքի կանոններով նախատեսված պաշտպանվող գոտու առումով:

Անդամ պետությունների կողմից ձեռնարկվող միջոցների մասին անհապաղ տեղեկացվում է Հանձնաժողովին եւ այլ անդամ պետությունների:

2. Առաջին պարբերության առաջին ենթապարբերության մեջ նշված անդամ պետության խնդրանքով կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ, Հանձնաժողովի մեկ կամ մի քանի ներկայացուցիչները, համագործակցելով իրավասու մարմինների հետ, կարող են անմիջապես մեկնել համապատասխան վայր՝ ստուգելու, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել եւ այդ միջոցների մասին եզրակացություն կազմել:

3. Եթե Հանձնաժողովին չեն տեղեկացնում ձեռնարկված միջոցի մասին, կամ եթե այն համարում է, որ ձեռնարկված միջոցները պատշաճ չեն, ապա վերջինս, համագործակցելով համապատասխան անդամ պետության հետ եւ մինչև Անասնաբուժության հարցերով մշտական կոմիտեի հանդիպումը, կարող է ձեռնարկել միջանկյալ պաշտպանիչ միջոցներ՝ կենդանահամաճարակային հիվանդությամբ վարակված տարածաշրջանից կամ համապատասխան հաստատությունից ստացվող արտադրանքի առումով: Այս միջոցները հնարավորինս շուտ ներկայացվում են Անասնաբուժության հարցերով մշտական կոմիտեի հաստատմանը, փոփոխմանը կամ չեղյալ հայտարարմանը՝ 17-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

4. Հանձնաժողովը բոլոր դեպքերում առաջին իսկ հնարավորության դեպքում Անասնաբուժության հարցերով մշտական կոմիտեի շրջանակներում վերանայում է տիրող իրավիճակը: Այն ընդունում է անհրաժեշտ ակտեր 1-ին հոդվածում նշված արտադրանքի առումով, եւ այն դեպքում, երբ դա պահանջվում է իրավիճակով՝ նաեւ ծագող արտադրանքի կամ նշված արտադրանքից ստացվող արտադրանքի առումով՝ 17-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն: Հանձնաժողովը դիտանցում է դրությունը, եւ միեւնույն ընթացակարգով փոփոխում կամ չեղյալ հայտարարում ընդունված որոշումները՝ կախված նրանից, թե ինչպես է զարգանում իրավիճակը:

5. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները եւ, մասնավորապես, մարդկանց առողջությանը հավանաբար լուրջ վտանգ հանդիսացող զոռնոս վարակիչ հիվանդությունների կամ այլ պատճառների ցանկը ընդունվում են 18-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

Հոդված 10

Յուրաքանչյուր անդամ պետություն եւ Հանձնաժողովը նշանակում են անասնաբուժական տեսչություն կամ տեսչություններ՝ որպես անասնաբուժական ստուգումներ անցկացնելու եւ անդամ պետությունների վերահսկողության բաժանմունքների հետ համագործակցելու համար պատասխանատու մարմիններ:

Հոդված 11

Անդամ պետությունները նաեւ ապահովում են, որ իրենց անասնաբուժական տեսչությունների պաշտոնյաները, համապատասխան դեպքում այդ նպատակով լիազորված այլ տեսչությունների պաշտոնյաների հետ համագործակցելով, մասնավորապես, ընդունակ լինեն՝

-իրականացնելու շինությունների, գրասենյակների, լաբորատորիաների, սարքավորումների, փոխադրամիջոցների, բույսերի եւ սարքերի զննումը, անցկացնեն արտադրանքի մաքրման ու պահպանման, արտադրանքի արտադրման եւ մշակման, այդ արտադրանքի մակնշման ու պիտակավորման, ինչպես նաեւ դրանք ներկայացնելու համար կիրառվող ընթացակարգերի ստուգումներ,

-իրականացնել ստուգումներ այն առումով, թե արդյոք աշխատակազմը համապատասխանում է Ա հավելվածում նշված ակտերով սահմանված պահանջներին,

- այն արտադրանքից նմուշներ վերցնել, որոնք պահվում են պահեստավորման կամ վաճառքի, ինչպես նաեւ շուկայում ներկայացնելու կամ տեղափոխելու նպատակով,

-զննել 3 (1) հոդվածի համաձայն ձեռնարկվող միջոցներից հետո անցկացվող ստուգումների մասին փաստաթղթային կամ համակարգչային նյութերը:

Այս նպատակով նրանք պետք է ստուգվող հաստատություններից ստանան իրենց պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ աջակցությունը:

Հոդված 12

1. 88/657/ԵՏՀ հրահանգով⁹ վերջին անգամ փոփոխված 64/433/ԵՏՀ հրահանգի¹⁰ 8 (3), 10-րդ եւ 11-րդ հոդվածները հանվել են:

2. 88/657/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված 71/118/ԵՏՀ հրահանգի¹¹ 5 (3) ու (4) հոդվածը եւ 9-րդ, 10-րդ ու 11-րդ հոդվածները հանվել են:

3. 87/489/ԵՏՀ հրահանգով¹² վերջին անգամ փոփոխված 74/461/ԵՏՀ հրահանգում¹³

i) 5 (2), (3), (4) ու (5) հոդվածները եւ 6-րդ ու 8-րդ հոդվածները հանվել են,

ii) Ցա հոդվածում 8-րդ հոդվածին կատարված հղումները փոխարինվել են 89/662/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածին կատարվող հղումով:

4. 89/227/ԵՏՀ հրահանգով¹⁴ վերջին անգամ փոփոխված 77/99/ԵՏՀ հրահանգի¹⁵ 7 (3) հոդվածը եւ 12-րդ ու 16-րդ հոդվածները հանվել են:

5. 80/215/ԵՏՀ հրահանգում՝

i) 5 (2), (3), (4) ու (5) հոդվածը եւ 6-րդ ու 7-րդ հոդվածները հանվել են,

ii) 7ա հոդվածում 7-րդ հոդվածին կատարված հղումները փոխարինվել են 89/662/ԵՏՀ հրահանգի 9-րդ հոդվածին կատարված հղումով:

6. Վերջին անգամ թիվ 3768/85 կանոնակարգով (ԵՏՀ)¹⁶ փոփոխված 85/397/ԵՏՀ հրահանգի¹⁷ 5 (3) ու (4) եւ 7-րդ, 8-րդ եւ 12-րդ հոդվածները հանվել են:

⁹ ՊՏ թիվ L 382, 21.12.1988թ., էջ. 3:

¹⁰ ՊՏ թիվ 121, 29. 07. 1964 թ., էջ 2012/64:

¹¹ ՊՏ թիվ L 55, 08.03.1971թ., էջ. 23:

¹² ՊՏ թիվ L 280, 03.10.1987թ., էջ. 28:

¹³ ՊՏ թիվ L 302, 31.12.1972թ., էջ. 24:

¹⁴ ՊՏ թիվ L 93, 06.04.1989թ., էջ. 25:

¹⁵ ՊՏ թիվ L 26, 31.01.1977թ., էջ. 85:

¹⁶ ՊՏ թիվ L 362, 31.12.1985թ., էջ. 8:

7. 88/657/ԵՏՀ հրահանգի 10(1) եւ (3) հոդվածը հանվել է:

8. 89/437/ԵՏՀ հրահանգի¹⁸ 8-րդ եւ 9-րդ հոդվածները հանվել են:

9. 72/462/ԵՏՀ հրահանգի¹⁹ Բ հավելվածում հավաստագրին ավելացվում է հետեւյալը՝
«Առաջին բեռն ստացողի անվանումն ու հասցեն»,

Հոդված 13

1. 64/433/ԵՏՀ եւ 71/118/ԵՏՀ հրահանգներին ավելացվում է հետեւյալ հոդվածը՝

1.

«Հոդված 19

Ներքին շուկայի ձեւավորման նպատակով՝ ներհամայնքային առեստրում կիրառվող անասնաբուժական ստուգումների վերաբերյալ 89/662/ԵՏՀ հրահանգում²⁰ սահմանված կանոնները մասնավորապես կիրառվում են ծագման ստուգումների, նշանակման վայրի անդամ պետության կողմից իրականացվող ստուգումների կազմակերպման եւ իրականացման, ինչպես նաեւ ձեռնարկվող պաշտպանիչ միջոցների նկատմամբ:»

2. 72/461/ԵՏՀ եւ 80/215/ԵՏՀ հրահանգներին ավելացվում է հետեւյալ հոդվածը՝

2.

«Հոդված 15

Ներքին շուկայի ձեւավորման նպատակով՝ ներհամայնքային առեստրում կիրառվող անասնաբուժական ստուգումների վերաբերյալ 89/662/ԵՏՀ հրահանգում²¹ սահմանված կանոնները մասնավորապես կիրառվում են ծագման ստուգումների, նշանակման վայրի

¹⁷ ՊՏ թիվ L 226, 24.08.1985թ., էջ. 13:

¹⁸ ՊՏ թիվ L 212, 22.07.1989թ., էջ. 87:

¹⁹ ՊՏ թիվ L 302, 31.12.1972թ., էջ. 28:

²⁰ ՊՏ թիվ L 395, 30.12.1989թ., էջ. 13:

²¹ ՊՏ թիվ L 395, 30.12.1989թ., էջ. 13:

անդամ պետության կողմից իրականացվող ստուգումների կազմակերպման եւ գործարկման, ինչպես նաեւ ձեռնարկվող պաշտպանիչ միջոցների նկատմամբ:»

3. 77/99/ԵՏՀ հրահանգին ավելացվում է հետեւյալ հոդվածը՝

3.

«Հոդված 24

Ներքին շուկայի ձեւավորման նպատակով՝ ներհամայնքային առեստրում կիրառվող անասնաբուժական ստուգումների վերաբերյալ 89/662/ԵՏՀ հրահանգում²² սահմանված կանոնները մասնավորապես կիրառվում են ծագման ստուգումների, նշանակման վայրի անդամ պետության կողմից իրականացվող ստուգումների կազմակերպման եւ գործարկման, ինչպես նաեւ ձեռնարկվող պաշտպանիչ միջոցների նկատմամբ:»

4. 85/397/ԵՏՀ եւ 88/657/ԵՏՀ հրահանգներին ավելացվում է հետեւյալ հոդվածը՝

4.

«Հոդված 18

Ներքին շուկայի ձեւավորման նպատակով՝ ներհամայնքային առեստրում կիրառվող անասնաբուժական ստուգումների վերաբերյալ 89/662/ԵՏՀ հրահանգում²³ սահմանված կանոնները մասնավորապես, կիրառվում են ծագման ստուգումների, նշանակման վայրի անդամ պետության կողմից իրականացվող ստուգումների կազմակերպման եւ գործարկման, ինչպես նաեւ ձեռնարկվող պաշտպանիչ միջոցների նկատմամբ:»

5. 88/437/ԵՏՀ հրահանգին ավելացվել է հետեւյալ հոդվածը՝

5.

«Հոդված 17

Ներքին շուկայի ձեւավորման նպատակով՝ ներհամայնքային առեստրում կիրառվող անասնաբուժական ստուգումների վերաբերյալ 89/662/ԵՏՀ հրահանգում²⁴ սահմանված կանոնները մասնավորապես կիրառվում են ծագման ստուգումների, նշանակման վայրի

²² ՊՏ թիվ L 395, 30.12.1989թ., էջ. 13:

²³ ՊՏ թիվ L 395, 30.12.1989թ., էջ. 13:

²⁴ ՊՏ թիվ L 395, 30.12.1989թ., էջ. 13:

անդամ պետության կողմից իրականացվող ստուգումների կազմակերպման եւ գործարկման, ինչպես նաեւ ձեռնարկվող պաշտպանիչ միջոցների նկատմամբ:»

Հոդված 14

Բ հավելվածում թվարկված արտադրանքի առետուրը՝ մինչեւ Համայնքի կանոնների ընդունումը, ենթակա է սույն Հրահանգով սահմանված վերահսկողության կանոններին, մասնավորապես՝ 5 (2) հոդվածում սահմանված կանոններին:

▼M10

՝Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին առաջին ենթապարբերության մեջ նշված արտադրանքի առետուրում կիրառվող պայմանների եւ ընթացակարգերի մասին:

▼B

Հոդված 15

64/432/ԵՏՀ հրահանգի²⁵ 9-րդ հոդվածում ներառվել է հետեւյալ կետը՝

- 2ա. Անդամ պետության պահանջով կամ հենց Հանձնաժողովի նախաձեռնությամբ, Հանձնաժողովի մեկ կամ մի քանի ներկայացուցիչներ, համագործակցելով իրավասու մարմինների հետ, կարող են անմիջապես գնալ համապատասխան վայր՝ ստուգելու, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել եւ այդ միջոցների մասին եզրակացություն կազմել:

▼M10

Հոդված 16

²⁵ ՊՏ թիվ 121, 29. 07. 1964թ., էջ 1977/64:

1. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում սույն Հրահանգի համաձայն անցկացվող անասնաբուժական ստուգումների մասին տեղեկություններ՝ ներդաշնակեցված տեսքով:

2. Հանձնաժողովը ստուգում է 1-ին պարբերությունում նշված տեղեկությունը Անասնաբուժության ոլորտում մշտական կոմիտեի շրջանակներում, ինչպես նաև այն կարող է ընդունել համապատասխան ակտեր՝ 18-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

3. Սույն հոդվածի կիրառման համար մանրամասն կանոնները, մասնավորապես՝ տեղեկությունների փոխանցման հաճախականության, վերջինս ներկայացնելու տեսքի եւ բնույթի առումով, սահմանվում են 18-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

▼Մ12

Հոդված 17

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002/ԵՀ կանոնակարգի²⁶ 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն:

2. Սույն հոդվածին հղում կատարելիս կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման²⁷ 5-րդ եւ 7-րդ հոդվածները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 օր:

3. Կոմիտեն ընդունում է իր Ընթացակարգային կանոնները:

Հոդված 18

1. Հանձնաժողովին աջակցում է Սննդի շղթայի եւ կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն:

²⁶ ՊՏ L 31, 01.02.2002թ., էջ 1:

²⁷ ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

2. Սույն հոդվածին հղում կատարելիս կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երեք ամիս:

▼B

ԳԼՈՒԽ IV

Անցումային և եզրափակիչ դրույթներ

Հոդված 19

▼M10 _____

▼B

2. Նախքան 1996 թվականի դեկտեմբերի 31-ը՝ Խորհուրդը վերանայում է սույն Հրահանգի դրույթները Հանձնաժողովի՝ ձեռք բերված փորձի մասին զեկույցի հիման վրա, որին կցվում է ցանկացած առաջարկ, և դրա վերաբերյալ որոշումը վերջինս կայացնում է ձայների որակյալ մեծամասնությամբ:

▼M10

Հոդված 20

Սույն Հրահանգով նախատեսված ստուգման պայմանավորվածությունների աստիճանական իրականացման նպատակով՝ անդամ պետությունները կարող են մինչև 1992 թվականի դեկտեմբերի 31-ը փոխադրման ընթացքում անցկացնել՝

Ա և Բ հավելվածներում նշված երրորդ երկրներից ստացվող արտադրանքի փաստաթղթային ստուգում,

Բ հավելվածում նշված արտադրանքի ոչ խտրական բնույթի նմուշային անասնաբուժական ստուգումներ:

▼M10 _____

▼M7

Հոդված 22

Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը գործողության մեջ են դնում 1992 թվականի հուլիսի 1-ին:

▼B

Հոդված 23

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

▼C2

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ԳԼՈՒԽ I

Մարդկանց կողմից իրացման համար նախատեսված կենդանական ծագման արտադրանքի արտադրումը, մշակումը, բաշխումը եւ ներմուծումը կարգավորող՝ կենդանիների առողջության վերաբերյալ կանոններ սահմանող՝ Խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 16-ի 2002/99/ԵՀ հրահանգ²⁸:

Կենդանական ծագման սննդի համար հատուկ հիգիենայի կանոններ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի թիվ 853/2004 Կանոնակարգ (ԵՀ)²⁹:

ԳԼՈՒԽ II

89/662/ԵՏՀ հրահանգի I գլխի Ա հավելվածում, իսկ ախտածինների առումով՝ 90/425/ԵՏՀ հրահանգում³⁰ նշված հատուկ Համայնքի կանոններով սահմանված համապատասխան պահանջներով չկարգավորվող արտադրանքի առետուրը եւ դրա՝ Համայնք ներմուծումը վերահսկող՝ կենդանիների առողջության եւ հանրության առողջության առումով պահանջներ սահմանող՝ Խորհրդի 1992 թվականի դեկտեմբերի 17-ի 92/118/ԵՏՀ հրահանգ:

Մարդու կողմից սպառման համար չնախատեսված կենդանական ծագման օժանդակ արտադրանքին վերաբերող առողջապահական կանոններ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հոկտեմբերի 3-ի կանոնակարգ³¹:

▼U11

²⁸ ՊՏ L 18, 23.01.2003թ., էջ 11:

²⁹ ՊՏ L 139, 30.04.2004թ.:

³⁰ ՊՏ L 62, 15.03.1993թ., էջ 49: Վերջին անգամ Հանձնաժողովի 2003/42/ԵՀ որոշմամբ փոփոխված հրահանգ (ՊՏ L 13, 18.01.2003թ., էջ 24):

³¹ ՊՏ L 273, 10.10.2002թ., էջ 1: Հանձնաժողովի թիվ 808/2003 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված Կանոնակարգ (ՊՏ թիվ L 117, 13.05.2003թ., էջ 1):

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

**ԱՐՏԱԴՐԱՆՔ, ՈՐԸ ԵՆԹԱԿԱ ՉԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ, ՈՐԻ
ՎԱՃԱՌՔԸ, ՍԱԿԱՅՆ, ԵՆԹԱԿԱ Է ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ**

Մյուս արտադրանքը, որը ներառված չէ սույն Հրահանգի Բ հավելվածում, ինչպես նաև 90/425/ԵՏՀ հրահանգի հավելվածում. Այս արտադրանքը որոշվում է 18-րդ հոդվածում սահմանված ընթացակարգով: